

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Ջաղօթս մեր տացու՛մ Քեզ Տեր,
ի գաւիթս նոր երուսաղէմի...

Տէ՛ր, եթէ Դու բանաս շրթներն իմ փակուած,
եւ լեզուիս ալ քակես կապերն ամբակուռ,
Բերանս ըզՔեզ պիտի օրհնէ իբր Աստուած,
Ամէն օր երբ արշալոյսին՝ բացուի դուռ:

Եթէ ինծի մաքուր յոյսի մը անգայտ
Տաս խոստումը ապագայի եւ շընորհ՝
Քեզ տեսնելու իբրեւ լոյսի ճառագայթ,
Պիտի բաղխեմ դուռն երկնիդ լուսաւոր:

Կարդամ պիտի անունդ սուրբ եւ բարի,
Գաւիթներուն մէջ այս տանդ խնկահոտ:
Պիտի երգեմ զայն ի քաղցր լուր աշխարհի,

Երբ աստղերը մարին ամէն առաւօտ,
եւ արեւը, կենդանարա՛ր սուրբ Հոգի,
Մեր սրտերու աղջամուղջին վրայ ծագի՛ր...»

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ